

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ
(ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ) ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Կոստանդին Կարապետի Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի խաչան) XIX դարավերջի և XX դարասկզբի արևելահայ երգիծական գրականության նշանավոր դեմքերից է:

Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների բառապաշարի շերտերի մեջ յուրահատուկ տեղ ունեն օտարաբանությունները (варваризмы), որոնք ինչպես իրենց արտաքին ձևով, այնպես էլ գործածության բնույթով տարբերվում են փոխառյալ բառերից:

Մայրենի լեզվում անհարկի գործածվող այլալեզվյան բառերը, արտահայտությունները և խոսքային կառույցները, որոնց համարժեքները գոյություն ունեն, օտարաբանություններն են:

Հարկ է նշել, որ խոսքի մեջ գործածվող օտարաբանությունները դժկարացնում են խոսքի ընկալումը, խախտում են ոճի միասնությունը, լեզվի մաքրությունը:

Օտարաբանությունների գործածությունը գրական լեզվի մեջ խրախուսելի չէ, սակայն գեղարվեստական գրականության մեջ նույնիսկ երբեմն անհրաժեշտ է, քանի որ իրականացնում է գեղարվեստական կոնկրետ խնդիրներ:

Օտարաբանությունները գրողի լեզվում ունեն ոճական որոշակի արժեք և միջավայրի ու հերոսների խոսքի տիպականացման լեզվական կարևոր միջոցներ են: Նրանք թեպետ գործածվում են գրականության մեջ, բայց չեն մերվում լեզվի բառային կազմին:

Օտարաբանությունների օգտագործումով գրողը իր խոսքին կարող է հաղորդել երգիծական, սատիրական երանգ: Հատկապես այս նպատակով էլ Մելիք-Շահնազարյանը դիմել է օտարաբանություններին:

Մելիք-Շահնազարյանը «Ձուռնա-Տմբլայուն» հաճախ է դիմում օտար բառերի և արտահայտությունների գործածությանը:

Տիրապետելով ռուսերեն, թուրքերեն, վրացերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն լեզուներին՝ Ղարաբաղի բարբառով զրկած ստեղծագործություններում այդ լեզուներից բառեր, նախադասություններ, նույնիսկ արտա-

հայտություններ մեջբերելով, ստեղծում է նկարագրվող երևույթներին կամ հերոսների խոսքին ու վարքագծին յուրահատուկ երգիծական միջավայր, միաժամանակ դրսևորելով իր վերաբերմունքը:

Գրողի գործածած օտար բառերի մեջ առավել շատ են ֆրանսերեն բառերը բոնժուռ, միսիո (բարև, պարոն), բոնժուռ, մադամ (բարև, տիկին), քոման սաւա (ինչպես են գործերը), վիվա Ֆրանսիա (կեցցե Ֆրանսիան), բուլանժե հացթուխ (1-55), մոնպլեզիր՝ հաճույք (1-118), ռեերանց՝ խոնարհում (1-168) և այլն:

Օրինակ՝ «Պարիժու վիստավկան» ֆելիետոնում, նկարագրելով «Պարիժի կազեթ կիրողներին մեջազկային կոնգրուստընը» իր ներկայանալը, Տմբլաչի հաջանը գեղարվեստական երգիծական փայլուն գրչով նկարագրում է հավաքված հասարակությանը՝ «լէմս, պալակ, ռուս, ինգլիզ, բերգեն, սպանացի, հոլանդացի, պորտուգալցի, իտալացի»: «Բալատ մեռնե կոնգրուստ, վեր մղակավը մի չի մտի, մէջին 5000 ա իւիլ կազեթ կիրող կար, լոխ էլ վեննը կացին, բոնժուռ միսիօ ռսեցին, եկին, մին մին պրովոթուն ըրին՝ քոման սաւա՛, քոման սաւա, իրեսս եր քլըմստեցին, ես էլ իրանց քոնժուռ ռսեցի, ծանդո՛ր ծանդրեանա քեցի Գիւլ Սիմոնին դիւբադիւրը մստեցի ...» (1-148):

«Կոնգրուստ» մտնելու իր պատմությունը համեմելով ֆրանսերեն բառերով և արտահայտություններով Տմբլաչի հաջանը ստեղծում է ֆրանսիական միջավայր:

«Միեզ Պարոննէ՛, ես խորհուրթ ըմ տեսնըմ մեջազկային խմբակիրների կոնգրուստը թողինք չրու Ախպիրին խմբակիրին կեալը, չիւն հանց սլոժմի հարցեր կայ, վեր առանց ընդդա մունք կարել չընք պեն շինինք, ռազի՛ ըք: Ռազի ը՛նք, ռազի ը՛նք, քաւօ, միլ լա Ֆռանս, միլ լ՝ Ախպիր ըսելալ էտ օրը կոնգրուստը փակուից» 1-150:

Գրողը երգիծում է թիֆլիսում հրատարակվող «Աղբյուր» ամսագրի խմբագրին, նրա՝ «կոնգրուստին» չներկայանալը «համարելով» «կոնգրուստի» չկայացման պատճառը: «Վիվ լա Ֆրանս», վիվ լ՝ Ախպիր» բառերով մեծացնում է երգիծանքի չափը՝ համեմատության մեջ դնելով Ֆրանսիան և «Ախպիրի» խմբագրին՝ կոնգրուստի կայացման գործում:

Օտար բառերի գործածությունը «Ձուռնա-Տմբլայում» հիմնականում հանդիպում ենք հեղինակային խոսքում. երբեմն նաև՝ հերոսների խոսքում՝ ծառայեցնելով այն որպես խոսքը ռճավորելու և անհատականացնելու միջոց:

Սիւս Պապակլոնճանց Զավահիրի՝ Փարիզից Շուշի ուղարկած նամակի տողերում երևում է շուշեցի կնոջ քաղքեմությունը, ինչպես նաև պարզամտությունը: Օտար բառերի գործածությունը ստեղծում է ֆրանսիական կոլորիտ և

բացահայտում է ֆրանսիացի կնոջ էությունը. «Ազի դէ էլ հինչ կիրիմ, փեսատ ըստեղ մին ֆռանգի գուվերնանդկա ա փռնալ տարին երկու հազար մնէթի. ամըն օր ինձ ասմա ընժուռ մառամ (մադամը կնգան ըն ասըմ, բոնժուռն էլ սաքի թա մեր պարիլիսն ա). իրեսս պուդդրի ա քսըմ, մազերս ծամ անըմ ֆռանգվաչի սարքըմ «օ քու վու ժեթ յառման մադամ» եանի թա հինչ սազ ա կեամ, ինձ սղալըմա վիստավկա դարկըմ, ետնան փսիտ կոկըմ. շատ նախշուն կնեզ ա փեսատ շատ հավան ա» (1-155):

«ԳէնովՖէն պատմըմ ա Սոտոմ-Գոմորի քանդուելը» (1-89) ընդգծված բառը գերմաներեն օտարաբանություն է: Բառի գործածությունը անհարկի է, երևի թե գրող երգիծաբանը նկատի ունի Շուշիի ռեալականի գերմաներենի ուսուցչին:

«Էս մեր կլուբին փողորաքչին ախր լափ զեահլա տարավ, վեցին քինըմ ըս ճիրազ չի կայ վառած, կարտ ըս օզըմ, նոր ա դարկըմ վեր բզարան պիրին, ուժիմը հու վեր գատու նման չի, ամըն օր կատլետ, ժարկոյ, քիշտեօս, կատլետ, ժարկոյ, քիշտեօս» (1-92) անդերկոթ (2-54) անգլերեն բառեր են:

Գեղինակը օգտագործում է և լատիներեն օտարաբանություններ՝ օմնիբուս (1-148) -երկու հարկանի ավտոբուս, օվիդիում (1-131) այգու ծառերի հիվանդություն, արխարավարուս (1-83) «խնթիրքալ տուալ ըմ, վեր կնդստորըմը ինձ արխարավարուսի օգնական շինին» արխար վարուս՝ արխիվի վարիչ – ուս (օս) – լատինական վերջավորություն:

Լատիներենով արտահայտություն է մեջբերված «Ինգլիզի պառլամենտըմ խօսած պղնձեռես Ուհանին վերչի ճառում»՝ «այժմ տիկնայք և պարոնայք –*aita jacta est*– վիճակը ձգուած է՝ մենք բանում ենք մեր դրօշակը (դօշակը) և կռիվ ենք մղում (էլիս կռիվ. խաթաբալա էլի, կռիւ. անվերջ կռիւ...) 2-40:

Այս օտարաբանությունները գործածված են անհարկի, ավելորդ ծանրաբեռնում են խոսքը: Մելիք-Շահնազարյանի երգիծանքին դա ոչինչ չի ավելացնում: Գրող երգիծաբանը օտար, բարբառին ոչ բնորոշ բառեր ու արտահայտություններ է մեջբերում ռուսերենով, վրացերենով, թուրքերենով: «Ահա Ղալին լուսավերուած շկօլին ըխճըկորանցը ծոզարդարին եկալ ըն հայ, թորք, բախկալ, դասաբ, լոխ, սհաթի օթին պուլկովի մուզիկը փչըմա ռէալնի շկօլին մունթերը ծլոնկ ըն ինըմ. «առավուտ, բառիշնա, ամամի տանգառատ աստը բարիշնան էլ՝ մէկալ օրուայ քար կոտորող թիւնուն ախճիկը, սբլդրան լոք ա տամ, կաղնըմ» (1-59). ընդգծված նախադասությունը ստեղծում է երգիծական իրադրություն:

«Այս հայեր, ծեզ հինգ ասիմ, եանի խէյ ըք գիւրջոցը (վրացիներին) կզնւցնըմ, խէյ ը՞ք տներ շինըմ, դիւքան բազար պեց անըմ, առուտուր անըմ, հարստանըմ, գիղը՛մ չըք, վեր գիւրջին խտի պենը եօր չօնըմ, դե միեզ վեր քոծ, բիծ, լակեյ, պոլը, կուչեր հռանման, ծեր ճարը հու՛նց կինի. վայը եկալ ա ծեզ տարալ: Պոռայայ Թիֆլիզ, Զակազախեկի կոյա աաուոմ. սաոհս...» (2-168):

«Նա ասնավաննի տակոյ-սեակոյ ստատոյի» (2-122) ռուսերեն արտահայտութիւնները ստեղծում են երգիծական իրադրություններ:

«Թուրքերի պրանին ծիւրը քինըմա (ախր խտի թմաշայ ումբներըմը հշտե՛ղ ըն տեսալ), վերը չոթմայ ա թխըմ, վերը տաշի, վերը վէնները տափը թակըմ՝ «օյնա, բաջի, օյնա, ա Յեաշիմ, ամմա նեա թեամաշայ դը՛, սա եօլասան աղամ, բունա բախ, բունա՛, մարալա օխշըլիւր, նա խօշ սֆաթ դը ...» (1-60) թուրքերեն այս հատվածը մեջբերված է ոճական նկատառումով:

«Զուռնա-Տմբլայում» գործածված են և վրացերեն բառեր, որոնք միայն երանգ են հաղորդում նկարագրված հատվածին, վրացիների վերաբերմունքը հայերի նկատմամբ խիստ բացասական էր: Դա XX դարասկզբին էր «...վեր հայերը իւրանց փեասա փիւսան հւաքած՝ մէր շհարներան տիւս կըկեան ընդդանց տները, միւլբերը, դիւքաննեն մեզ կմնան, կնստինք ջան կասինք, ջան կլխսինք, շէնի ճիռիմէ երգելաւ, Կախթու կինի կոնծելաւ օրընէս կընցնինք ...» (2-166):

Գործածված «շէնի ճիռիմէ» ցավդ տանեմ օտարաբանությունը, օգնում է ստեղծելու վրացական միջավայր, վարքագիծ, բնավորություն. «մեսմիա, քատոնո, մեսմիս, շէնի ճիռիմէ, բատոնո, շէնի ճիռիմէ, ճիռիմէէէ, ճիռիմէ...» (2-166):

«Ըստեղ էտ ճրիմ ճրիմումը Դրամաֆոնս սուս անըմ», երգիծելով «Վիրի կազէթի այս տողերը»՝ Տմբլաչի խաչանը իր վերաբերմունքն է արտահայտում՝ «ճրիմ-ճրիմումին», այսինքն՝ այն պահին, երբ «շէնի ճիռիմէ» էին կանչում: Երգիծանքին դիմելով՝ գրողը զգոն էր պահում հայ հասարակության ուշադրությունը:

Մելիք-Շահնազարյանը օգտագործում է վրացերեն մի շարք բառեր և՛ մոցիբուլ, լոթի պաժառնի, վէքսիլ, որոնք կարելի է ընդունել և որպես փոխառություններ:

Ինչպես տեսանք, Մելիք-Շահնազարյանի՝ Ղարաբաղի բարբառով գրված «Զուռնա-Տմբլա» (1907-1908) ֆելիետոնների երկհատոր ժողովածուի մեջ, բառապաշարային այլ շերտերի հետ տեղ են գտել և օտարաբանությունները, որոնք հարազատ չեն Ղարաբաղի բարբառին, այդ բարբառով խոսող ժողովուրդը դրանք չի օգտագործում, բայց հեղինակը մեջ է բերել իր խոսքում՝

ոճական զանազան նկատառումներից ելնելով: Իրենց ոճական յուրահատուկ երանգի շնորհիվ այդ բառերը և նախադասությունները ծառայում են որպես միջոց այս կամ այն ժողովրդի կյանքի ու կենցաղի մասին որոշ պատկերացում տալու և տեղական բնորոշ երանգ ու համապատասխան կոլորիտ ստեղծելու համար:

Նկարագրելով «Պարիժի» կոնգրուստը կամ բնութագրելով «գիրքոցը», նրանց յուրաքանչյուրին անհատականացնում է նաև լեզվական միջոցներով: Լեզվական միջոցները նպաստում են կերպարների տիպականացմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՄՆԵՐ

1. «Սիսիի իննիս ծիւլ Սիմոնը զնգեսկին տւաւ կոնգրուստը պեց ըրաւ. ու մին լեւաւ ճառ ասից փռնգերէն, ասից պարոննէ, գիղըմ ըք հինչ կայ, դորթա ծեզ կանչալ ընք մեչազկային կազէք կիրողների կոնգրուստի, ամմա հինչ ըրած էս տարի էտ կոնգրուստը կլոօխ չի կաեմ չիւն Ախպիւրի խմբակիրը հեալա Պարիժ չի հասալ, սօր Մոսկովա քլորամա ըրալ, թա հեալա քինըմ ըմ Պետրպոլկ, ընդեղան քինալու ըմ Վեննա ու Բերլին Ախպիւրին մհար քեօհնա կլիշանէ զակազ տամ, համ էլ տեսնամ հինչ սև կատու ա ընցալ Բիսմարկին ու Կալնօկուն արալղաւը, մին թեահր անիմ բրշցնիմ, ետնան մննելու ըմ Վեննետիկ հայր Ալիշանի Արարատին սխալնէն դիւզըցնիմ, ետնան քընալու ըմ Յոնոմ Պապին խէլքին նստըցնիմ, վէր Իտալիոյ վեղան տիւս չի կայ, ընտեղան Սիլանաւ տալ ըմ Ժենեվաւ տիւս կեամ, Ժենեվաւ տալու ըմ Լոնդոնաւ տիւս կեամ՝ Իոլանդու եսքան տարուայ հարցը վճռիմ, Պարնելին եախան թափիմ, ընդեղան թա վէր մչալ ինի, կը կեամ ծեր Պարիժի կոնգրուստին» (1.149):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մելիք-Շահնազարյան «Ձուռնա- Տմբլա», հ. 1, Վաղարշապատ, 1907թ.
2. Մելիք-Շահնազարյան «Ձուռնա -Տմբլա», հ. 2, Վաղարշապատ, 1908թ.
3. Ա.Մարության, Եղիշե Չարենցի լեզուն և ոճը, Երևան, 1979թ.